

*Հաստատված է Խ.Արուսյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի
2018թ. փետրվարի 16-ի թիվ 5 նիստում
գիտական խորհրդի նախագահ՝*

_____ *Ռուբեն Միրզախանյան*

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Խաչատուր Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Խաչատուր Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) ռեկտորի նախագահությամբ գործող կոլեգիալ մարմին է, որը լուծում է Համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական ու գիտատեխնիկական գործունեության պլանավորման, համակարգման և կարգավորման հիմնահարցերը:

1.2. Գիտական խորհուրդը ձևավորվում և գործում է Համալսարանի կանոնադրության և սույն Կանոնակարգի համաձայն:

1.3. Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

2. Գիտական խորհրդի իրավասությունը

2.1. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) ռեկտորի ներկայացմամբ՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ.

3) հասկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ ՀՊՄՀ-ի՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ.

4) հաստատում է ֆակուլտետների, գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների, լաբորատորիաների, ամբիոնների կանոնադրությունները, ՀՊՄՀ-ի գիտական և կրթական հիմնական գործունեությունը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտերը.

5) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների, սահմանում է վարձավճարների չափերը.

6) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ ՀՊՄՀ-ում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

7) ընդունում է մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, ՀՊՄՀ-ի մեդալներով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ.

8) հաստատում է ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը.

9) շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների ղեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորների թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.

10) ՀՊՄՀ-ի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ ՀՊՄՀ-ի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ.

11) ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ՀՊՄՀ-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ.

12) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

13) ըստ անհրաժեշտության ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը.

14) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներից, Համալսարանի կանոնադրությունից և սույն Կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

3. Գիտական խորհրդի կազմը

3.1. Համալսարանի գիտական խորհրդի անդամների թիվը չի կարող գերազանցել 70-ը:

3.2. Համալսարանի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներն են:

3.3. Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են՝

1) ի պաշտոնե՝ Համալսարանի ռեկտորը (գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (գիտական խորհրդի քարտուղար), արհեստակցական կազմակերպության ղեկավարը, ֆակուլտետների ղեկավարները.

2) ռեկտորի նշանակմամբ՝ կրթության և գիտության ասպարեզի գործիչներ, համալսարանի աշխատակիցներ,

3) Համալսարանի սովորողները, որոնց առաջադրում է համապատասխան մակարդակի ուսանողական խորհուրդը՝ ֆակուլտետի դեկանի համաձայնությամբ, իսկ ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը:

4) Ֆակուլտետների ներկայացուցիչները որպես ընտրովի անդամներ, որոնց առաջադրում է համապատասխան ֆակուլտետի խորհուրդը և հրամանագրում է ռեկտորը:

3.4. Գիտական խորհրդի կազմը և այդ կազմում փոփոխությունները հրամանագրվում են ռեկտորի կողմից:

3.5. Գիտական խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

1) իր դիմումի համաձայն.

2) պաշտոնից ազատվելու դեպքում, եթե գիտական խորհրդի անդամ է դարձել ի պաշտոնե.

3) ռեկտորի որոշմամբ, եթե գիտական խորհրդի անդամ է դարձել ռեկտորի նշանակմամբ.

4) գիտական խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող ստորաբաժանման առաջարկությամբ՝ գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ի համաձայնությամբ.

5) գիտական խորհրդի անդամի պարտականությունները չկատարելու դեպքում՝ գիտական խորհրդի անդամների առնվազն 2/3-ի որոշմամբ.

4. Գիտական խորհրդի աշխատակարգը

4.1. Գիտական խորհրդի աշխատանքները կազմակերպվում են գիտական խորհրդի կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրով:

4.2. Գիտական խորհրդի նիստերը գումարվում են ռեկտորի կողմից առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

4.3. Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում:

4.4. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ, գաղտնի քվեարկության մասին:

4.5. Գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման միջոցով:

4.6. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են Համալսարանի կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

4.7. Գիտական խորհրդի որոշումները տարածվում են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներում՝ որոշումն ընդունելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.8. Գիտական խորհրդի օրակարգի և քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ որոշումների նախագծերը խորհրդի անդամներին տրամադրվում են նիստից առնվազն 5 օր առաջ:

4.9. Գիտական խորհրդի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամանով: